ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1962 Общественные науки

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ*

Հարուստ ու բազմազան են պատմագիտական հանդեսների 1961 թվականի տարեվերջի համարները:

«ՎՈՊՐՈՍԻ ԻՍՏՈՐԻԻ ԿՊՍՍ» Երկամսյա հանդեսի 6-րդ համարը բացվում է «ՍՄԿՊ XXII համագումարը արդիականության մեծագույն իրադարձությունն է» առաջնորդող հոդվածով: Հոդվածում մասնավորապես ասված է.

Պարտիայի, նրա Կենտրոնական Կոմիտեի իսկական սխրագործությունն էր Ստալինի անձնավորության պաշտամունքի բացահայտ ու համարձակ դատապարտումը XX համագումարում: Դա անգնահատելի նշանակություն ունի սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման, միջազգային կոմունիստական շարժման համար: Անդրադառնալով անհատի պաշտամունքի հետևանքներին, առաջնորդողը նշում է, որ դրանք առանձնապես մեծ վնաս հասցրին պարտիայի պատմության վերաբերյալ գիտությանը, որը տարիներ շարունակ հանգեցվում էր «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացին», որի մեջ, ինչպես հայտնի է, իշխում էր Ստալինի անձնավորության պաշտամունքը: Այդ գրքին նախորդած պարտիայի պատմության վերաբերյալ գիտության գրեթե ողջ գրականությունը արգելված էր, իսկ այն գրքերը, որոնք երևան եկան 1938 թվականից հետո, մեծ մասամբ հանդիսանում էին «Համառոտ դասընթացի» և Ստալինի աշխատությունների տիրացուական շարադրումն ու մասսայականացումը:

Դ. Ի. Զլենոկովի «ՍՄԿՊ Մոգիբը և մարքսլենինյան տեսության մի քանի հարցեր» հոդվածի մեջ հիմնականում քննված են կոմունիստական շինարարության ընթացքում արտադրողական ուժերի զարգացման, հասարակական հարաբերությունների վերափոխման, կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում հասարակության քաղաքական կազմակերպման և կոմունիստական հումանիզմի հարցերը:

ՍՄԿՊ Կանոնադրության մեջ պարտիայի կառուցման լենինյան սկզբունքների հարցին է նվիրված Ա. Ի. Միդրովի և Ս. Ի. Ֆեդոսեևի հոդվածը: Զետեղված են նաև Դ. Ա. Կոզլովի «Սովետական ժողովրդի և Կոմունիստական պարտիայի գլխավոր տնտեսական խնդիրը», Պ. Ս. Ռոմաշկինի «Կոմունիզմը և պետությունը», Մ. Ա. Վլադիմիրովի և Ի. Ի. Միտրոֆանովի «Ժողովրդի բարեկեցության նկատմամբ հոգատարությունը ՍՄԿՊ-ի գործունեության բարձրագույն օրենքն է» և Ժակ Դյուկլոյի «Դեմոկրատիայի պայքարը սոցիալիզմի պայքարի անբաժանելի մասն է» հոդվածները:

Դրախոսություն և քննադատություն բաժնում զետեղված է գրախոսություն Կոմունիստական ինտերնացիոնալի փաստաթղթերի ժողովածուի երկրորդ հատորի մասին, որը միջազգային կոմունիստական շարժման պատմության կեղծարարները հրատարակել են Անգլիայում: Գրքի մեջ լայնորեն օգտագործված է փաստաթղթերը ապավաղելու և աղճատելու մեթոդը: Կոմինտերնի կարևոր փաստաթղթերի հատվածների մի մասը հանվել է, որի հետևանքով խեղաթյուրված է պատկերվում քաղաքականությունը: Կոմինտերնի փաստաթղթերի հիշյալ հատորի հրատարակությունը մեկ անգամ ևս ապացուցում է, թե ինչպես հակակոմունիզմի ժամանակակից գաղափարախոսները, ձգտելով աշխատավորների մեջ անվստահություն առաջացնել կոմունիստական շարժման նկատմամբ, ոչ մի միջոցից չեն խորշում, որպեսզի խեղաթյուրեն նրա փառապանծ պատմությունը:

* * *

«ԻՍՏՈՐԻԱ ՍՍՍՌ» Երկամսյա հանդեսի 6-րդ համարում տպագրված է Գ. Գ. Դախշլեգերի «Սոցիալ-տնտեսական վերափոխումների բնույթը Ղազախական առլում 1921—1928 թթ.» ծավալուն հոդվածը, որտեղ հեղինակը ցույց է տալիս Սովետական իշխանության շնորհիվ հոչվորական գյուղում կատարված սոցիալ-տնտեսական փոփոխությունները, ցարիզմի գաղութային քաղաքականության հետևանքների վերացումը, նրստակեցության անցումը, չքավոր գյուղացու աստիճանաբար միջակ դառնալու առաջընթաց քայլերը:

1921—25 թվականների Պետպլանի գործունեությունը և պլանավորման հարցերում բուրժուական գաղափարախոսության դեմ մղված պայքարին է նվիրված Է. Բ. Դենկինայի հոդվա-

* *«Տեղեկագիրն» այսուհետև պարբերաբար տեղավորելու է հասարակագիտական պարբերականների համառոտ տեսությունները։*

ծր, որը գրված է արխիվային հարուստ փաստաթղթերի հիման վրա:

Հոդվածում նշված է, որ Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն էր դարձնում Պետպլանի աշխատանքներին և Պետպլանի գործունեության առաջին երկու տարիներին այդ աշխատանքները ընթանում էին անմիջականորեն Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ:

Հանդեսի խմբագրությունը այս համարից սկսած բացել է նոր բաժին՝ սովետական պատմաբանների գիտական փորձ: Խմբագրությունը նպատակ է դրել երիտասարդ պատմաբաններին հաղորդել սովետական բազմավաստակ պատմաբանների գիտական մեթոդը, պատմական աղբյուրների վրա աշխատելու փորձը: Հիմնական աշխատությունների ստեղծումը, հրատարակման ընթացքը, առաջիկա տարիների գիտական պլանները և այլն: Այս համարում հրապարակված են ակադեմիկոս Ն. Մ. Դրուժինինի «Պատմաբանի հույսեր և մտքեր» և Մ. Կ. Ռոժկովայի «Պատմական աղբյուրների վրա աշխատանքի իմ փորձից» հոդվածները:

Քննադատություն և գրախոսություն բաժնում մասնավորապես հրապարակված է Ա. Ս. Սմիռնովի գրախոսականը Ա. Ա. Երիցյանի «Դյուղական դեպուտատների սովետները Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ժամանակ» գրքի մասին, որտեղ ն կով գրքի դրական կողմերը, գրախոսողը կատարել է նաև մի քանի դիտողություններ:

Դրական կյանքի բաժնում հաղորդագրություն է հրապարակված «Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ՍՍՌՄ պատմության» բազմահատորյակի քննարկման մասին, որը տեղի է ունեցել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում: Բազմահատորյակի նախապատրաստական հարցերի քննարկմանը մասնակցել են նաև Ա. Հարությունյանը, Մ. Ակայանը և Վ. Ասկանյանը:

* * *

«ՎԻՊՐՈՍԻ ԻՍՏՈՐԻԻ» ամսագրի 12-րդ համարն սկսվում է ակադ. Ե. Մ. Ժուկովի «ՍՄԿՊ XXII համագումարը և սովետական պատմաբանների խնդիրները» հոդվածով: Նշելով, որ պարտիայի XXII համագումարը պատմական խոշոր իրադարձություն էր և կարժանանա նրկա և ապագա պատմագիրների Սովետական Միության ու արտասահմանյան պատմաբանների ուսումնասիրությանը և կդառնա մանրազնին հետազոտության առարկա, հոդվածագիրը գրում է, որ Ստալինի անձնավորության պաշտամունքի վերացումը և լենինյան նորմաների վերականգնումը հասարակական գիտություններին ազատեցին սուբյեկտիվիստական սխալների բեռից, այն ոխրահոչակ անսկզբունքայնությունից, որը տարիներ շարունակ խանգարում էր գիտական վերլուծությանը:

Ե. Մ. Ժուկովը հոդվածում կանգ է առնում նաև հին բոլշևիկ, ականավոր պատմաբան Մ. Ն. Պոկրովսկու պատմագիտական ծառայություններն ըստ արժանվույն գնահատելու հարցի վրա: Նա նշում է, որ հարկավոր է վճռականորեն դեն նետել Պոկրովսկու նկատմամբ ամեն տեսակ կանխակալ կարծիք, բայց չտալ, որ նրա անվանը փակցվեն զանազան արատավորող վիրավորական պիտակներ:

Այնուհետև նա նշում է, որ այժմ XXII համագումարից հետո առանձնապես մեծ անելիքներ ունեն սովետական հասարակության պատմության մասնագետները, որոնք պետք է վեր հանեն սովետական սոցիալիստական հայրենասիրության հարցերը:

Ն. Յա. Մերպերտը և Դ. Բ. Շեյովը «Հնագիտությունը պատմական գիտություն է» հոդվածում առաջ են քաշել սովետական հնագիտության զարգացման որոշ հարցեր: Նրանք նշում են, որ հնագիտության դերը հատկապես մեծ է ՍՍՌՄ-ի այն ժողովուրդների պատմության ուսումնասիրման համար, որոնք գիր ու գրականություն չեն ունեցել:

Մոսկվայի մոտ գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախման 20-ամյակին է նվիրված Դ. Ի. Տամոնովի «Պատմության ուսանելի դասերը» հոդվածը:

«Սովետական պատմագիտության մեջ ռուսական կապիտալիզմի զարգացման մի քանի պրոբլեմները», այսպես է վերնագրված Ա. Է. Միդոռովի հոդվածը:

Հրապարակված են նաև Ի. Ս. Կոնի «Պատմության քրիստոնեական փիլիսոփայությունը ծառայում է ռեակցիային» և Ա. Ա. Շեցովի «1936—1941 թվականներին Ռումինիայում գերմանական իմպերիալիզմի տնտեսական էքսպանսիայի պատմությունից» հոդվածները:

Պատմագիտությունը ՍՍՌՄ-ում բաժնում ՍՍՌՄ պատմության երկրորդ հատորի (1861—1917 թթ.) մասին գրված է գրախոսություն, որի մեջ առանձնացված են մի շարք հարցեր, որոնք հեղինակների կոլեկտիվի կողմից անհրաժեշտ պարզությամբ չեն լուսաբանված: Ընդհանուր առմամբ գիրքը առաջընթաց քայլ է համարվում մեր երկրի պատմական զարգացման ամբողջ պրոցեսի մարքս-լենինյան վերլուծության ու լույսը ընդհանրացման ճանապարհին:

Համարում կա նաև արտասահմանի պատմագիտությանը նվիրված բաժին:

Ամսագրի վերջում համառոտ տեղեկություններ են տրվում տվյալ համարին աշխատակցած հոդվածագիրների մասին:

Վ. ԱՍԱՆԹՐԻՍՅԱՆ

«ՎՈՊՐՈՍԻ ՖԻԼՈՍՈՖԻԻ» ամսագրի № 12-ում տպագրված են գիտությանը և բաղաքականությանը վերաբերող հոդվածներ, բրոշյուրներ, ռենեսանսական դիտողություններ և ասելիք այլ արժեքավոր նյութեր:

Ամսագիրը բացվում է Յ. Ստեփանյանի «Կոմունիզմի կառուցման հիմնական օրինաչափություններ» հոդվածով, որտեղ հեղինակը ցույց է տալիս, որ հասարակության զարգացման ներկա էտապի հիմնական օրինաչափությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելն է, մի օրինաչափություն, որն անխուսափելի է բոլոր ժողովուրդների համար, անկախ այդ ժողովուրդների սոցիալիզմին անցնելու ձևերից: Հասարակության զարգացման այս օրինաչափության օրգանական շարունակությունը, նշում է հեղինակը, կոմունիզմի կառուցումն է մեր երկրում և սոցիալիզմի լագերի երկրներում:

Կոմունիզմի բարձր փուլի կառուցման հիմնական օրինաչափությունները, ընդգծում է հոդվածագիրը, կոմունիստական շինարարության պրակտիկայի ուսումնասիրությունն ու գիտական ընդհանրացումն են, սոցիալիզմի տնտեսական, բաղաքական և կուլտուրական զարգացման հիմնական օրինաչափությունների ուսումնասիրությունը, կոմունիստական դաստիարակության հարցերի մշակումը:

Մտավոր և ֆիզիկական աշխատանքի զուգակցման և նրանց մեջ գոյություն ունեցող անջրպետի վերացման մասին է Ա. Ն. Մատլինի և Դ. Վ. Օսիպովի հոդվածը, որտեղ մանրամասնորեն ցույց է տրված արծարծված հարցի պրակտիկ լուծման կարևորագույն նշանակությունը կոմունիզմի կառուցման համար:

Նոր մարդու, կոմունիզմի շրջանի մարդու ձևավորման ու դաստիարակության հարցերին է նվիրված Դ. Ջ. Ապրեսյանի «Սովետական ինքնագործ արվեստը որպես մարդու բազմակողմանի զարգացման միջոց» հոդվածը: Հոդվածագիրը ցույց է տվել, որ նոր մարդու ձևավորման հարցում մեծ դեր են խաղում գրականությունը, արվեստը և գեղարվեստական ինքնագործունեությունը: Վերջինս մեր երկրում դարձել է ժողովրդական տաղանդների զարգացման հիմնական դպրոց: Արվեստը, գրականությունը, մասնավորապես գեղարվեստական ինքնագործունեությունը նոր մարդուն կնասցնի զարգացման այնպիսի աստիճանի, առանց որի կոմունիստական հասարակարգ պատկերացնել հնարավոր չէ:

Հասարակության զարգացման ճանապարհին խոչընդոտ հանդիսացող հակակոմունիստական ուժերի դատապարտվածությանն է վերաբերում Տ. Ի. Օյզերմանի հոդվածը: Վկայակոչելով ՍՍԿՊ Մեծագիր, հոդվածագիր, համոզիչ, ակնառու փաստերով, օրինակներով ցույց է տալիս, որ կոմունիզմի դեմ պայքարելու համար մի դրոշի տակ են համախմբվել ամբողջ իմպերիալիստական ռեակցիայի ուժերը: Հակակոմունիզմի կեղծ լոզունգի տակ իմպերիալիստական ռեակցիան հետապնդում ու բանավորում է առաջադիմական ու ռեոլյուցիոն ամեն մի շարժում, միտք, աշխատում է բուլացնել բանվոր դասակարգի միասնությունը, նրա պայքարի եռանդը: Ֆինանսական օլիգարխիա և ռազմամոլություն, ֆաշիստներ և ռեակցիոն այլ տակտիկներ, զգուշաբարներ և կալվածատերեր,— սա՝ իմպերիալիստական ռեակցիայի իդեական և բաղաքական ձեռնածուները: Հակակոմունիզմը բուրժուական իդեոլոգիայի դեգրեդացիայի արտահայտությունն է, կապիտալիզմի զոյությունը երկարաձգելու անհույս նիզակ:

Ակադեմիկ Վ. Ա. Ֆոկի «Հարաբերականության համարժեքության սկզբունքների դերը էյնշտեյնի ձգողականության թեորիայում» հոդվածում ցույց է տրված այն սկզբունքների անալիզը, որոնց հիման վրա կառուցված է էյնշտեյնի «ձգողականության» թեորիան, այլ խոսքով նրանում տրված է այդ թեորիայի տրամաբանական կառուցվածքի վերլուծությունը:

Իր «Մոդելների իմացաբանական նշանակությունը» հոդվածում Վ. Ա. Շտոֆը մի անգամ ևս ապացուցում է, որ մատերիալիստական հանճաչողականության թեորիան ելնում է այն բանից, որ մոդելը հանդիսանում է ճանաչողության ձևերից մեկը, մարդու կողմից նյութական աշխարհը արտացոլելու հատուկ ձևը: Զարգացնելով այս միտքը Շտոֆը ապացուցում է, որ իդեական և նյութական մոդելները մարդու ճանաչողության բարդ պրոցեսում հանդես են գալիս որպես անհրաժեշտ աստիճաններ: Նրանց դերի և ֆունկցիաների նշանակության բացահայտումը, որին նվիրված է հոդվածը, արտակարգ նշանակություն ունի մարդու ճանաչողական հատկությունների իմացաբանական հետազոտության համար:

Ն. Վ. Մոտրոշիլովան հանդես է եկել «Գասերլի ֆենոմենոլոգիական և փիլիսոփայության հիմնական հարցը» հոդվածով: Մեր դարի առաջին տասնամյակում Եվրոպայում լայն տարածում ստացած փիլիսոփայական այս ուղղությունը այժմ դադարել է գոյություն ունենալուց, որովհետև այն իր սկզբունքներով միտում էր իդեալիզմը գիտության մեջ, պրակտիկայում, բայց և հնում էր մնում մատերիալիզմից: Այն բնկավ բուրժուական գիտական սիստեմին հատուկ հակասության մեջ: Փիլիսոփայական այդ ուղղության պատմության լուսաբանմանն է նվիրված սույն հոդվածը:

Ամսագրի «Գիտական հաղորդումներ և հրապարակումներ» բաժնում հանդես են եկել Ա. Յա.

Բոկսերը. Դ. Ա. Միշախինը. Ս. Ս. Պոլտիրեր: Այդ նույն բաժնում է տեղավորված նեոպոզիտիվիզմի և լեզվաբանական նորագույն ուղղությունը նվիրված Վ. Ա. Չվեկինցևի հոդվածը:

Ամսագիրն ունի «Փիլիսոփայությունն ուսումնասիրողի համար», «Պատասխան հարցերին», «Փիտական կյանք», «Քննադատություն և քննադատություն» բաժինները, որոնցում հրապարակված են փիլիսոփայության զանազան հարցերին նվիրված հոդվածներ, բդրակցություններ, գրախոսականներ, բուրժուական իդեալիստական «պիտական» միտքը մերկացնող նյութեր:

Ամսագրի էջերում հատուկ շարադրված է նաև արտասահմանյան մի շարք ամսագրերի հակիրճ բովանդակությունը և տրված է նոր գրականության ցանկը:

Ա. ԱՍՐՅԱՆ

* *

«ՎԱԳՐՈՍԻ ԼԻՏԵՐԱՏՈՒՐԻ» ժուռնալի այս հատորը բացվում է «ժամանակակից թեմաներ» բաժնով, որում տեղավորված են գրողների և արվեստագետների հոդվածները այն մասին, թե ինչ խնդիրներ ունեն արվեստը և գրականությունը՝ կապված պատերազմի XXII համագումարի կողմից առաջ քաշած խնդիրների հետ: Առաջին տպագրված է Միրզա Իբրահիմովի «Կյանքը կառուցել գեղեցիկի օրենքներով» հոդվածը, որում հեղինակը, հենելով պատերազմի նոր ծրագրում գրականության և արվեստի խնդիրներին տված բնորոշումներից, գտնում է, որ գրականությունը իր դերը, մասսաների կոմունիստական դաստիարակության դերը, կարող է կատարել միայն այն ժամանակ, երբ անընդհատ կմտնենք ժողովրդին, նրա կյանքին, բուն իրականությանը, երբ նա կկարողանա ժամանակակից մարդուն և նրա աշխատանքը պատկերել իր ճշմարտության մեջ: Հեղինակը նշում է, թե որպեսզի գրականությունը և արվեստը դառնան միլիոնների ուրախության և ոգևորության աղբյուր, կարողանան գաղափարապես հարստացնել և դաստիարակել նրանց, արտահայտեն հումանիստական, մարդկային գաղափարները, պետք է գեղարվեստորեն անընդհատ կատարելագործվեն:

Այս բաժնում տպագրված են նաև Վերա Կետլինսկայայի «Նոր ծաղկման սկիզբը», Ասկոլդ Մուխտարի «Համամարդկայինը, կոմունիստականը...», Անատոլի Կուզնեցովի «Մեռած դարձյալ ոռակ» և այլ հոդվածներ, որոնց հեղինակները առաջ են քաշում մեր գրականության և արվեստի խնդիրները, մտահոգվում նրանց իրականացման առավել կատարյալ և ճշմարտացի ուղիներ որոնելու հարցով: Այս բաժնում տպագրված են նաև Ա. Մաշենկոյի և Դ. Լենորլի հոդվածները, որոնցից առաջինում հեղինակը քննարկում է աշխատանքի և դաստիարակության փոխհարաբերության հարցը գրականության մեջ, իսկ երկրորդը մի ակնարկ է սովետական գեղարվեստական գրականության լեզվի վերաբերյալ:

Գրականության տեսությունը ամբողջացվում է Վ. Կելդիշի «Հանուն նոր, համաշխարհային կուլտուրայի» հոդվածով, որում առաջ է քաշվում այն բեգը, թե կուլտուրայի բնագավառում տեղի ունեցող ժամանակակից պրոցեսները չի կարելի բմբռնել առանց իմանալու նրանց պատմությունը: Այս առումով հոդվածում լուսաբանվում է Գորկու մինչհոկտեմբերյան շրջանի պայքարը՝ հանուն սոցիալիստական արվեստի:

Ստեղծագործական դիսկուսիաներ բաժինը նվիրված է Էսթետիկայի հարցերին և բնդգրկում է Լ. Պաժիտնովի և Բ. Շրագինի «Ինչպե՞ս էսթետիկան կապել կյանքի հետ» հոդվածը:

Հիշյալ հոդվածում հեղինակները առաջ են քաշում ոչ միայն մեր արվեստի և գրականության, այլև մեր ողջ կյանքի համար որոշակի նշանակություն ունեցող հարց. ինչ հարաբերության մեջ է էսթետիկան կյանքի հետ: Այս առումով հեղինակները իրավացիորեն նկատում են, թե այժմ սովետական գեղագիտական գիտության գլխավոր խնդիրն է կոմունիստական հասարակության մարդու էսթետիկական գիտակցության ձևավորման պրոբլեմների ողջ կոմպլեքսի մշակումը: Եվ քանի որ այս հարցը վերաբերում է նաև արվեստի ու գիտության այլ բնագավառների, ապա սովետական էսթետիկայի համար անմիջականորեն առաջ է քաշվում կոմունիստական կուլտուրայի շինարարության գործում իր առանձնահատուկ տեղի որոշման խնդիրը:

Քննադատելով գոյություն ունեցող որոշ կարծիքներ, հեղինակները ձևակերպում են իրենց դրական հետևությունները, որոնցից ուշադրության արժանի է այն բեգը, թե էսթետիկական գործունեությունը կապվում է բնդհանրապես մարդու ստեղծարար աշխատանքի հետ: Այս առումով քննադատվում է բուրժուական էսթետիկայի սահմանափակությունը: Հեղինակները նկատում են, որ բուրժուական էսթետիկան սկզբունքորեն անկար է էսթետիկական գործունեության մեջ նրա սպեցիֆիկ, յուրահատուկ ձևից, արվեստից դուրս տեսնել նրա համընդհանուր ձևը՝ մարդու ստեղծարար աշխատանքը:

Հեղինակները նկատում են, որ սոցիալիստական իրականության մեջ էականորեն փոփոխվում է արվեստի սովորական դարձող տեղը, փոփոխվում են և գեղարվեստական ստեղծագործության ներքին օրինաչափությունները: Ժամանակակից էսթետիկական մտքի գլխավոր խնդիրն է

տեսականորեն բացահայտել այդ փոփոխությունները: Առանց այդ խնդրի լուծման, հասարակական գիտությունը չի կարող հաղթահարել կյանքից իր հետ մնալը:

«Գրականության պատմության» բաժնում տեղավորված է Յա. Էլսբերգի «Իսկական և կեղծ հատապություն» հոդվածը, որում հեղինակը քննարկում է Բելկովի Պուշկինին վերաբերող ուսումնասիրությունը, Ա. Ս. Բուշմինի «Սալտիկով-Շչեդրինի սատիրան» գիրքը և Վ. Արխիպովի Նեկրասովին վերաբերող աշխատանքը: Հիշյալ աշխատանքները քննարկելիս հեղինակը ելակետ ունի մի կողմից այն թեզը, որ անցյալի գրականության, նրա նշանակալից երևույթների վերլուծության ու բացահայտման մեջ պետք է տեսնել այն հորարարությունը և անկրկնելի գեղարվեստական հայտնությունները, որոնք բնութագրում են անցյալի մեծ հեղինակներին և նրանց ստեղծագործությունը, մյուս կողմից ելնում է այն դիրքից, որ ՍՄԿՊ XXII համագումարին հատուկ կոմունիստական բարձր գաղափարախոսության և ստեղծագործական համարձակության ոգին գրականագիտությունից պահանջում է ստեղծել խորապես որույն, հորարարական աշխատանքներ, գիտական հայտնագործումներ, որոնք լինեն ներդրում սովետական ժողովրդի հոգևոր կյանքում:

Այս բաժնում տպագրված են նաև Դ. Բլագոյի «Ուսուցանելով դաստիարակել և դաստիարակելով՝ ուսուցանել», Լ. Կարոյի «Ամեն անգամ նոր ձևով», Ն. Գուծիյի «Դպրոցում ինչպես դասավանդել գրականությունը», Բելկինի «Հարկավոր է սովորեցնել ուսուցիչներին» և այլ հոդվածներ, որոնցում քննարկվում են դաստիարակության և ուսուցման հարցեր:

Արտասահմանյան գրականության բաժնում տպագրված են Ն. Կարանֆիլովի «Ժամանակակից իրականությունը և լիրիկան» և Ի. Վերցմանի «Ժ. Ժ. Ռուսսո և բուրժուական ռեալիզմը» հոդվածները, որոնցից առաջինում հեղինակը քննարկում է ժամանակակից բուլղարական պոեզիայի խնդիրները, կյանքի հետ ունեցած նրա կապերի, Բուլղարիայում նոր, սոցիալիստական հասարակության պրակտիկ կառուցման և նոր մարդու հետ կապված հարցերը և պոեզիայի խնդիրները այդ ուղղությամբ: Հեղինակը ժամանակակից բուլղարական իրականության գրեթե ամբողջը համարում է նոր մարդու հոգեբանության աստիճանական փոփոխությունը, նրա սոցիալիստական գիտակցության աճը, նրա պայքարը բուրժուական վերապրուկների վերացման համար: Ժամանակակից իրականության ամենանշանավոր երևույթը հեղինակը համարում է սոցիալիստական մարդուն: Հեղինակը տալիս է բուլղարական նոր պոեզիայի ձեռքբերած նվաճումները և նրա խնդիրները:

Երկրորդ հոդվածում բացահայտվում են մի կողմից Ռուսսոյի, նրա ստեղծագործության և ֆրանսիական 18-րդ դարավերջի ռեալիզմի փոխհարաբերության հարցերը, մյուս կողմից այն, թե ինչպես ռեալիզմի շրջանի տարբեր ուժեր, ինչպես և հետագայում տարբեր խմբավորումներ ու պարտիաներ համապատասխանաբար առաջ են քաշել Ռուսսոյի ստեղծագործության այս կամ այն կողմը: Այսպես, օրինակ, եթե յակոբինների համար առավել նշանակալից է Ռուսսոյի «հասարակաց դաշինքը», նրա քաղաքական տեսությունը, ապա ժիրոնդիստները հակվում են դեպի «նոր Լոիզը» կամ «միայնակ երազողի բավառումները»:

«Գրական ուսուցում» բաժնում «Ինչպես ենք մենք գրում» ընդհանուր խորագրի տակ տպված են Մեխտի Հուսեյնի և Վ. Սախնովսկի-Պանկենի հոդվածները—գրական վարպետության առանձին հարցերի վերաբերյալ:

Գրախոսությունների բաժնում տպագրված են Սարենովի գրախոսականը Բ. Ն. Ասենի «Ինչի՞ և ո՞ւմ է հարկավոր պոեզիան» գրքի վերաբերյալ, Բոչարովի գրախոսականը՝ Վ. Օգնևի «Պոեզիան և ժամանակակից իրականությունը», Պ. Բելկովի գրախոսականը՝ «Միջին Ասիայի և Ղազախստանի ժողովուրդների գրականության պատմություն» գրքերի մասին, ինչպես նաև Ա. Ջիշևրինի գրախոսականը՝ Բ. Վ. Տոմաշևսկու «Պուշկինը և Ֆրանսիան» գրքի, Խիմինդուլյի և Ցվեյգի ստեղծագործությունների մասին Ս. Սանդերսոնի և Պ. Տոպերի գրքերի վերաբերյալ գրախոսականները:

«Գրքերի մասին կարճ», «Գրքերի և թերթերի մեջ», «Կատակով և լուրջ», ինչպես և «Խրոնիկա» բաժիններում գետեղված են նյութեր ընթացիկ գրական հարցերի մասին:

Բ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ